ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐԵՎԱՇՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Արեվաշող համայնք,
հասցե գ._Արեվաշող 1 Փ. 105,
Հեռախոս 0255 2-21-76,
էլ. փոստ arevashogh.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» Հուլիսի 2020 թվականի № 038

ԿԱՐԵՆ ՎԱԼԵՐԻԿԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «ՏԻՄ» օրենքի 35 – րդ հոդվածի 16 – րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 60 – րդ և 68 – րդ հոդվածի 8 – րդ կետով՝ ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով, Հիմք ընդունելով Լոռու մարզի Արևաշող համայնքի ավագանու «Արեվաշող համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելու մասին» 2020 թվականի հունիսի 15 – ի թիվ 18 որոշումը, «Արեվաշող գյուղական համայնքին համայնքային սեփականության իրավունքով պատկանող հողամասերը վարձակալությամբ հատկացնելու կամ աճուրդային կարգով օտարելու հանձնաժողով» - ի աճուրդային կարգով հաղամաս օտարելու մասին 27.07.2020թ – ի թիվ 2 արձանագրությունը և հաշվի առնելով որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աճուրդում հաղթող ճանաչված Կարեն Վալերիկի Ալավերդյանին օտարել Լոռու մարզի Արևաշող համայնքում 1 Փ. 57/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.007471 հա հողամասը /ծածկագիր 06-021-0043-0018/ 66.250 (վաթսունվեց հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամով /համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ N 15052020-06-0038 վկայականի/
2. Տասնօրյա ժամկետում վերը նշված հողամասի արժեքի գումարը վճարելուց հետո Կարեն Վալերիկի Ալավերդյանի հետ կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր:
3. Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Կարեն Վալերիկի Ալավերդյանի միջոցների հաշվին:
4. Հողաշինարարին համայնքի հողային հաշվեկշռում կատարել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Պ.ՊԱՊԻԿՅԱՆ